ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 12

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1.Համայնքապետարանի համար ձեռք բերված գույքը հիմնական միջոցների ցանկում ընդգրկելու մասին:

/Զեկ.Լ.Սահակյան/

2.21 դեկտեմբերի 2016թ-ի ավագանու թիվ 38-Ն որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ. Լ.Սահակյան/

3.Մանկապարտեզ հաճախող, զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ծնողական վճարից ազատելու մասին:

/Զեկ.Մ.Դավթյան/

4.Այգավան համայնքին պատկանող /ծածկագիր՝ 0062-0006/ 304քմ բնակավայրի բնակելի կառուցապատման հողը օտարելու մասին:

/Զեկ.Մ.Դավթյան/

5.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի առաջադրման մասին:

/Զեկ.Մ.Դավթյան/

6.Այգավան համայնքի 19.01.2017թ-ի ավագանու N7-Ն որոշման հավելված թիվ 2-ում և 16.03.2017թ-ի N11-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ.Մ.Դավթյան/

7.15.05.2017թ-ի դրությամբ Այգավան համայքնի բյուջեի եկամուտների կատարողականի հաղորդում:

/Զեկ.Լ.Սահակյան/

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 13

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 42 հոդվածի 10) կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ձեռք բերված գույքը՝ պլաստմասե սեղաններ, աթոռներ, տպիչ CANON MF211, տեսախցիկ, տեսախցիկի ամրակ, թմբուկ քարթրիջի, ստեղնաշար, ռեզինե վալ քարթրիջի, մալուխ, վառարան canon 3220,VGA մալուխ, փոխակերպիչ, բջջային հեռախոս V17, ընդգրկել հիմնական միջոցների ցանկում:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 14-Ն

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ-Ի ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նվազագույն աշխատավարձի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 7)կետով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 1-ին կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

21 դեկտեմբերի 2016թ-ի ավագանու թիվ 38-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություն՝ <<Տեխսպասարկման անձնակազմ>> բաժնի առաջին տողը ընթերցել հետևյալ կերպ.

Պահակ – 1 - 72756

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱՋԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կտ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 15-Ն

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՃԱԽՈՂ, ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 հոդվածի 2-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել երկու զոհված ազատամարտիկների և յոթ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ցուցակը:

1.Ազիզյան Դավիթ

2.Առաքելյան Արտակ

3.Ժամհարյան Վռամ

4.Սահակյան Նարեկ Արամի

5. Սահակյան Խաչիկ Արամի

6.Մմբատյան Ջուլյա

7.Հովհաննիսյան Նարե

8.Մանասերյան Լյուդմիլա

9.Սիմոնյան Մարիամ

10. Երանոսյան Էլիզա

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 16-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ /ԾԱԾԿԱԳԻՐ՝0062-0006/ 304ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 16-րդ կետով և հողային օրենսգրքի 68 հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի սեփականություն համարվող /ծածկագիր՝ 0062-0006/ 304քմ բնակավայրի բնակելի կառուցապատման հողի օտարումը աճուրդով, մեկնարկային գինը սահմանել 1քմ 810 դրամ:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՍԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42 կետով և հիմք ընդունելով Արարատի մարզպետի 31 մարտի 2014թ-ի N29 որոշման հավելվածի 2-ի 10-րդ կետը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել ՀՀԿ անդամ Աղասի Բաբիկի Մկրտչյանին, որպես Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 18-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 19.01.2017Թ-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N7-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2-ՈՒՄ ԵՎ 16.03.2017Թ-Ի N11-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 4-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

19.01.2017թ-ի ավագանու N7-Ն որոշման հավելված թիվ 2-ում և 16.03.2017թ-ի ավագանու թիվ N11-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և վերախմբավորել /հավելված/:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կնք.

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2017 թվականի
մայիսի 15-ի թիվ 18-Ն որոշման

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

2017թ-ի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ:

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ:
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 դրամ:
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1500դրամ:
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500 դրամ

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25000 դրամ

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7800 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6300 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7800 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա

առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ:

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ:

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ:

դ. խաղատների համար՝ 750000 դրամ:

ե. շահումով խաղերի համար՝ 250000 դրամ:

զ. վիճակախաղերի համար՝ 110000 դրամ:

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5500 դրամ:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2625 դրամ:

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50000 դրամ:

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000 դրամ

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250000 դրամ:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 դրամ:

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3500000 դրամ:

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ:

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15000դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ

6) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար՝ 500դրամ

7) Օգտագործված կենցաղային ջրի համար տեղական վճարը սահմանել ամսական յուրաքանչյուր շնչից 30 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2017 թվականի N 19-Ն

15.05.2017թ-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ընդունել գիտություն համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը 15.05.2017թ-ի դրությամբ:

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլանը (հազ.դրամ)	Դեկտեմբերի կատարողականը (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
Հողի հարկ	15200.0	1340.228	8.82%
Գույքահարկ փոխադրամիջոցներ	7993.5	2051.064	25.66%
Գույքահարկ շենք շինություն իրավաբանական անձանցից	14.200	9.734	68.55%
Հողի վարձավճար	1050.5	207.0	19.704%
Այլ ոչ հարկային եկամուտներ	1600.0	31.0	1.94%
Ծխախոտի, խմիչքների վաճառքի թույլտվություն,տեխնիկական հեղ.հեղուկ գազեր, շենքերի և	850.0	322.5	37.94%

շինությունների արդիականաց. ուժեղաց.			
Գույքահարկ անհատ ձեռն. և քաղ. համայնքի տարածքում	335.8	2.978	0.89%
Ընդամենը	27044.0	3964.504	14.66%

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.